ՁԵՌՔ ԲԵՐԵՔ ՀԱՇԻՎ ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Առցանց ստուգեք ձեզ հասանելի ընթացիկ հաշիվների տեսակները և ընտրե՛ք այն բանկը կամ վարկային միությունը, որը լավագույնս համապատասխանում է ձեր պահանջներին:

2. Զանգահարե՛ք ձեր ընտրած բանկին կամ վարկային միությանը և հարցրե՛ք նրանց ծառայությունների մասին: Հարցերի օրինակների համար այցելե՛ք dcba.lacounty.gov կայք:

Եթե բանկը համապատասխանում է՝ ձեր պահանջներին, ապա ձեռք բերե՛ք պայմանավորվածություն հաշվեհամար բացելու համար:

Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ

Միշտ հարցրեք տվյալ բանկին կամ վարկային միությանը, սակայն սովորաբար պահանջվում է հետևյալը՝

- ՆԱԽՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏ
- ՁԵՐ ԱՆՈՒՆՈՎ ԵՎ ՀԱՍՑԵՈՎ ՎՃԱՐՄԱՆ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ
- ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

3. Նախքան նոր հաշվեհամարի բացման պայմանագիրը ստորագրելը, կարդացե՛ք բոլոր ընդհանուր դրույթներն ու պայմանները: Եթե որևէ բան անհասկանալի է, ապա հարցրեք բանկի ներկայացուցչին: Երբեք մի ստորագրեք այնպիսի փաստաթուղթ, որը ձեզ համար անհասկանալի է

ՄԻԱՑԵ՛Ք BANK ON ՇԱՐԺՄԱՆԸ

ՁԵԶ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՄ ՑԱՆԿԱՆՈՒ՞Մ ԵՔ ԻՄԱՆԱԼ ԱՎԵԼԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՁԵՐ ԳՈՒՄԱՐԸ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴԱՐՁՆԵԼ

Այցելե՛ք **dcba.lacounty.gov** կայք և ծանոթացե՛ք Լոս Անջելեսի տարածաշրջանի Ֆինանսական հզորացման կենտրոնի (Center for Financial Empowerment) **2017 Ռեսուրսների ուղեցույցին:** Ռեսուրսների ուղեցույցում նշված համայնքային կազմակերպությունները կարող են հավելյալ տեղեկություն տրամադրել բանկային գործարքների առավելությունների մասին, տրամադրել ֆինանսական անհատական քոուչինգ և ավելին:



Ցանկանու՞մ եք իմանալ՝ գումար խնայելու ավելի շատ եղանակներ՝
Հետևե՛ք **@LACountyCFE** թվիթերի մեր էջին:

LOS ANGELES COUNTY
CONSUMER & BUSINESS AFFAIRS
CENTER FOR FINANCIAL EMPOWERMENT

Մեր նպատակն է համակարգել և համապատասխանեցնել միջոցառումային գործունեությունը կառուցելու համար տնտեսական կայունություն և տնային տնտեսությունների բարեկեցություն Լ.Ա. տարածաշրջանում ցածր ու միջին եկամուտ ունեցող բնակիչների համար :

Լոս Անջելեսի տարածաշրջան
Վերահսկիչ խորհուրդ
Հիլդա, Լ. Սոլիս, առաջին շրջան
Մարկ Ռիդլիյ-Թոմաս, երկրորդ շրջան
Շեիլա Քուել, երրորդ շրջան
Ջանիս Հան, չորրորդ շրջան
Քաթրին Բարգեր, հինգերորդ շրջան

BankOn
Los Angeles County

ԱՊԱՀՈՎԱԳՐԵ՛Ք ՁԵՐ ԳՈՒՄԱՐԸ, ՎՍՏԱՀԵ՛Ք BANK ON-ին

LOS ANGELES COUNTY
CONSUMER & BUSINESS AFFAIRS
CENTER FOR FINANCIAL EMPOWERMENT

Armenian- հայերեն

Bank On-Ը ՀԵՇՏ Է ԵՎ ԱՊԱՀՈՎ

Դուք գումար եք վաստակել: Մի՛ վատնեք այն ծախսատար վճարումների վրա: Երբ բացում եք ընթացիկ հաշիվ Լոս Անջելեսի տարածաշրջանում Bank On-ի միջոցով, ապա ստանում եք առավելություններ, օրինակ՝ չկա օվերդրաֆտի կամ գումարի կանխիկացման միջնորդավճար

ԴՈՒՔ ԳՈՒՄԱՐ ԿԽՆԱՅԵՔ

Հնարավոր է, որ դուք կանխիկացման ծառայություններից օգտվելիս ամեն անգամ բարձր վճարներ եք կատարում, ինչը կարող է հանգեցնել հավելյալ հարյուրավոր դոլարների: Օրինակ, եթե ԱՄՆ $1,000 կանխիկացնելիս վճարում եք 3% միջնորդավճար, ապա կորցնում եք ԱՄՆ $30:

ԳՈՒՄԱՐԸ ՏԵՂՈՒՄ Է, ԵՐԲ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼԻՆԻ

Սկսած էլեկտրոնային և դեբետային քարտով էլեկտրոնային վճարումներ կատարելուց մինչև բանկոմատից գումար կանխիկացնելը, ձեր գումարը մշտապես ձեզ հասանելի կլինի ընթացիկ հաշվի միջոցով:

ԳՈՒՄԱՐՆ ԱՊԱՀՈՎ Է

Դուք կարող եք վտանգել ձեր գումարը, եթե չպահեք այն ընթացիկ հաշվում: Դուք կարող եք կորցնել այն արտակարգ իրավիճակներում, ինչպիսիք են՝ գողությունը, հրդեհը կամ բնական աղետները: Պահելով գումարը բանկում՝ այն մնում է ապահով է և ձեզ հասանելի:

ԴՈՒՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՔ ՀԱՄՆԵԼ ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ

Եթե ունեք ընթացիկ հաշիվ, ապա առավել հեշտ է ֆինանսական դաշտ մտնելը և այլ ֆինանսական՝ պրոդուկտներից օգտվելը, օրինակ՝ սպառողական վարկերից, մեքենայի ձեռքբերման և հիփոթեքային վարկերից:

Չունե՞ք սոցիալական ապահովության համարանիշ: Լ.Ա. տարածաշրջանի Bank On-ն ունի տարբերակներ ձեզ համար Լոս Անջելես տարածաշրջանի Bank On ծրագրին մասնակցող բանկերի ու վարկային կազմակերպությունների մեծ մասն ընդունում են նույնականացման տարբեր ձևեր, ներառյալ՝ հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) և Մեքսիկայի կառավարության կողմից տրված նույնականացման քարտը (Matriculas Consular):

Լոս Անջելեսի տարածաշրջանի Bank On-ի մասին

Լոս Անջելեսի տարածաշրջանի Bank On-ը Լոս Անջելեսի տարածաշրջանի Սպառողների և Բիզնես գործարքների դեպարտամենտի՝ Ֆինանսական հզորացման կենտրոնի (L.A. County Department of Consumer and Business Affairs' Center for Financial Empowerment) կողմից իրականացվող ծրագիր է, որի նպատակն է բնակիչներին հասանելի դարձնել ապահով և մատչելի ֆինանսական պրոդուկտները:

Լոս Անջելեսի տարածաշրջանի Bank On-ն աշխատում է տեղական բանկերի և վարկային միությունների հետ փոքր վճարով ընթացիկ հաշիվներ տրամադրելու համար, որոնք կծառայեն որպես ֆինանսական թանկարժեք ծառայություններին այլընտրանք:

Bank On-ին միացած բանկերն ու վարկային կազմակերպությունները պետք է ներառեն ծառայություններ, որոնք ապահով են հաճախորդի համար:

Լոս Անջելեսի տարածաշրջանի Bank On-ը ընթացիկ հաշվի առավելություններից մի քանիսն են՝

- **Անվճար կանխիկացման ծառայություններ**
- **Հաճախորդների սպասարկման անվճար և անսահմանափակ ծառայություններ**
- **Անվճար առցանց և հեռախոսային բանկային ծառայություններ**
- **Հաշվի բացման ցածր նվազագույն դեպոզիտ՝ ԱՄՆ 25 դոլար կամ ավելի քիչ**
- **Չկա օվերդրաֆտի վճար**